ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

գ.Փարաքար **13.03.2025թ.**

ԱՐՁԱՆԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի վարչական շենքում տեղի է ունեցել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստ, մասնակցությամբ՝ հանձնաժողովի նախագահ՝ Կարապետ Արթենյանի, հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Սիմոնյանի, անդամներ՝ Մելանյա Կոստանյանի, Հակոբ Միքաելյանի, Ժանետա Գասպարյանի, Արմենուհի Սարգսյանի:

Հանձնաժողովի նիստին ներկա էր դիմումատու Ռոմիկ Գրիգորի Ներսեսյանի (ծնված՝ 1980 թվականի փետրվարի 07-ին, անձնագիր՝ AS 0489403, տրված 2014 թվականի հունվարի 14-ին 057-ի կողմից) լիազոր ներկայացուցիչ՝ Շուշան Հմայակի Ներսեսյանը (ծնված՝ 1954 թվականի ապրիլի 24-ին, անձնագիր՝ AV 0286508, տրված 2022 թվականի հունիսի 28-ին 057-ի կողմից) հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ համայնք Փարաքար գյուղ Պտղունք Հ.Շիրազի փողոց տուն 26 հասցեում:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ համայնք Փարաքար գյուղ Պտղունք Հ.Շիրազի փողոց տուն 26 հասցեի բնակիչ Ռոմիկ Գրիգորի Ներսեսյանի 2025 թվականի փետրվարի 12-ի N 0689 դիմումի քննարկումն է՝ բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ցուցակում ներառելու վերաբերյալ:

Դիմումատուն դիմումին կից ներկայացրել է հետևյալ փաստաթղթերը՝

1. Ռոմիկ Գրիգորի Ներսեսյանի անձնագրի, ՀԾՀ պատճենները
2. Ռոմիկ Գրիգորի Ներսեսյանի մոր՝ Շուշան Հմայակի Ներսեսյանի անձնագրի, ՀԾՀ պատճենները
3. Ռոմիկ Գրիգորի Ներսեսյանի եղբայր՝ Արսեն Գրիգորի Ներսեսյանի անձնագրի, ՀԾՀ պատճենները
4. Ռոմիկ Գրիգորի Ներսեսյանի քույր՝ Քրիստինե Գրիգորի Ներսեսյանի անձնագրի, ՀԾՀ պատճենները
5. Ռոմիկ Գրիգորի Ներսեսյանի հոր մահվան վկայականի պատճենը

7. Ռոմիկ Գրիգորի Ներսեսյանի կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի թիվ 51030 որոշման պատճենը
8. ՀՀ օրենսդրությամբ սահմանված սոցիալական ապահովության երաշխիքներից և արտոնություններից օգտվելու մասին տեղեկանքի պատճենը
9. Տեղեկանք ընտանիքի կազմի վերաբերյալ
10. Տեղեկանք Ռոմիկ Գրիգորի Ներսեսյանի հաշվառման վայրից
11. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ տեղեկանք թիվ ԱՏ-30012024-99-1542
12. Քրիստինե Գրիգորի Ներսեսյանի անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը
13. Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի պատճենը
14. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը
15. Տեղեկանք բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ
16. Լիազորագիր

Զեկուցող՝ Կ.Արթենյան

Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) Արմավիրի մարզի Փարաքար համայնք գյուղ Պտղունք Հ. Շիրազի փողոց տուն 26 հասցեի բնակիչ Ռոմիկ Գրիգորի Ներսեսյանի (ծնված՝ 1980 թվականի փետրվարի 07-ին, անձնագիր՝ AS 0489403, տրված 2014 թվականի հունվարի 14-ին 057-ի կողմից) N 0689 դիմումի ուսումնասիրության նպատակով կատարել է տնայց:

Այցելություն ենք կատարել Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ համայնք Փարաքար գյուղ Պտղունք Հ.Շիրազի փողոց տուն 26 հասցեում բնակվող Ռոմիկ Գրիգորի Ներսեսյանին: Ռոմիկ Ներսեսյանը փաստացի հաշվառված է և բնակվում է քրոջ՝ Քրիստինե Գրիգորի Ներսեսյանին սեփականության իրավունքով պատկանող սեփական տանը (սեփականության վկայական N 696574)՝ Արմավիրի մարզ համայնք Փարաքար գյուղ Պտղունք Հ.Շիրազի փողոց տուն 26 հասցեում, մոր՝ Շուշան Հմայակի Ներսեսյանի, քրոջ՝ Քրիստինե Գրիգորի Ներսեսյանի և եղբոր՝ Արսեն Գրիգորի Ներսեսյանի հետ միասին: Ռոմիկ Ներսեսյանը ըստ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի 1999 թվականի օգոստոսի 19-ի թիվ 51036 որոշման համաձայն 1998 թվականի դեկտեմբերի 7-ին զինծառայության պարտականությունները կատարելիս /հիմք՝ տեղեկանք թիվ 2506, 17.03.1999 թթ. զ/մ-ի հրամանատարից/ ստացել է վիրավորում՝ ախտորոշվել է աջ ստորին վերջույթի բացակայության սրունքի ս/3-ի մակարդակով, ձախ աչքի բացակայություն՝ ականապայթունային վիրավորման հետևանքով:

2024 թվականի հունվարի 30-ին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրվել է թիվ ԱՏ-30012024-99-1542 տեղեկանքը՝ գույքային իրավունքների առկայության և

Ըստ Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային արխիվի տվյալների ՀՀ տարածքում քաղաքացի Ռոմիկ Գրիգորի Ներսեսյանի (ծնված՝ 1980 թվականի փետրվարի 07-ին, անձնագիր՝ AS 0489403, տրված 2014 թվականի հունվարի 14-ին 057-ի կողմից) մարզ Արմավիր, համայնք Փարաքար գյուղ Պտղունք Մուշի փողոց 10 հասցեի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք: 2014 թվականի օգոստոսի 12-ից մինչ օրս վերոնշյալ քաաքացու անվամբ /հիմք անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր 12.08.2014թ. ս/մ 4233/ ՀՀ տարածքում անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով վերոնշյալ քաղաքացու նկատմամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով կատարվել է օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում:

Համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի 2024 թվականի թիվ ԱՏ-30012024-99-1542 գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ տեղեկանքի 1998 թվականի մարտի 1-ից մինչ օրս վերոնշյալ քաղաքացու անվամբ ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, **հանձնաժողովը որոշեց.**

Ռոմիկ Գրիգորի Ներսեսյանին (ծնված՝ 1980 թվականի փետրվարի 07-ին, անձնագիր՝ AS 0489403, տրված 2014 թվականի հունվարի 14-ին 057-ի կողմից) ներառել բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ցուցակում:

Հանձնաժովի նախագահ՝ _____ Կ. Արթենյան

Հանձնաժովի քարտուղար՝ _____ Լ.Սիմոնյան

անդամներ՝ _____ Մ.Կոստանյան

_____ Հ. Միքաելյան

_____ Ժ.Գասպարյան

_____ Ա.Սարգսյան

ՆԱԽԱԳԻԾ

ՄԱՐՏ 2025թ.

ԶԻՆՀԱՇՄԱՆԴԱՄ ՌՈՄԻԿ ԳՐԻԳՈՐԻ ՆԵՐՍԵՍՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի բնակարանային հարցերի ուսումնասիրության հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 13-ի թիվ 01 նիստի թիվ 01 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Զինհաշմանդամ Ռոմիկ Գրիգորի Ներսեսյանին վերցնել հաշվառման հաշմանդամ դարձած (զոհված) զինծառայողների (ազատամարտիկների) բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ցուցակում:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ**

1. Համայնքի ղեկավարի խորհրդականի պաշտոնակատար _____
2. Իրավաբանական բաժին _____
3. Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին _____